Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2012 թվականի հուլիսի 25-ի
№293Ա որոշմամբ

ԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ ընկերություն) կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետև՝ հանձնաժողով) տեղեկատվության ներկայացման (այսուհետև՝ տեղեկատվություն) ընթացակարգը:

2. Տեղեկատվությունը ներկայացվում է եռամսյակային կարգով՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը:

3. Տեղեկատվությունը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ ընկերության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի էլեկտրոնային ստորագրությամբ՝ tech.report@psrc.am էլեկտրոնային հասցեին:

4. Տեղեկատվությունը ներկայացվում է սույն կարգի №№1-4 հավելվածներով հաստատված ձևերով:

5. Տեղեկատվությունը ներկայացվում է էքսէլէս (XLS) կամ էքսէլէսէքս (XLSX) ֆորմատների ֆայլերի տեսքով, հայկական ֆոնետիկ յունիքոդ (phonetic unicode) տառատեսակով:

6. Տեղեկատվության ներկայացման վերաբերյալ ընկերության ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը գրավոր ծանուցում է հանձնաժողովին: